ՆՈՐ-ԴԱՐ

№ 47 ՏԱՍՆԵՒԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ Հինգշաբթի 16 Մարտի 1895 Հինգշաբթի 16 Մարտի ՏԱՍՆԵՒԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 47

Տարեկան 10 րուբլի, վեց ամիսը՝ 6 րուբ., երեք ամիսը՝ 3 ր. 50 կ.
ամիսը՝ 1 ր., համար՝ 5 կ.
Բաժանորդ գրւում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը։

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ. Редакція «Норъ-Даръ»
կամ Tiflis Rédaction «Nor-Dar».

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւններն ընդունւում են ամեն լեզուներով
Յայտարարութիւնների տողին 2 կ., րեկլամների համար կրկնապատիկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քննիչ յանձնաժողովի գործունէութիւնը։
Հայերի դրութիւնը Թիւրքիայում։
«Նովոյէ Վրեմեա» և ճշմարտութիւնը Հայաստանի մասին։
Կիւրեղ եպիսկոպոս Սրապեան։
Քրոնիկոն.— Իգդալեանի թաղման կարգը։ Շուշուց։ Թիֆլիսի պարսից նոր հիւպատոս։ Մերվից։ Տարափոխիկ հիւանդութիւններ։ Շամախուց։ Կովկասեան հանքային ջրերը։ Շամախուց։ Նարզանի հանքային ջուրը։ Շուշուց։ Մի կնոջ դիակ։
Նամակ խմբագրին։
Թուրքմէններն Անդրկասպեան երկրում։
Քաղաքական.— Իշխան Բիսմարկ։ Սպաների կռիւը խմբագրների դէմ։ Քաղաքական լուրեր։
Բանասիրական.— Գրականական ակնարկներ—Մամուլի չուրջը։
Խառն լուրեր։
Հեռագրներ։
Տեղեկատու։
Յայտարարութիւններ։

ՔՆՆԻՉ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ

Կարինից մեզ գրում են հետևեալը. «Կառավարութեան կարգադրութեամբ, երեք թիւրքեր, որոնք շատ լաւ գիտեն եղեր հայերէն ազատ խօսել, սասունցի ձևանալով՝ կըներկայացնեն եւրոպական քննիչ յանձնաժողովին խնդրագիր մը, որու մէջ կըգանգատին իբրեւ այլ-ևայլ հայ սասունցիներու վրայ՝ անոնց թիւրք [illegible] կառավարութիւնը զրպարտելուն համար, ուրանալով միանգամայն այն ամենը, ինչ որ կատարուած է Թիւրքերի և քիւրդերու ձեռքով Սասնոյ գաւառին մէջ։

Սակայն, բարեբաղդաբար, հայ մը, որը ծառայութեան պաշտօն է կատարելիս եղեր քննիչ յանձնաժողովին անդամներուն քով, իսկոյն գլխի կ'ընկնայ խնդրատուներու հայ չլինելուն ու երբ ամեն բան, այսինքն անոնց նպատակնին կլպալպալի բոլորովին, անմիջապէս կըվռնդին կեղծ սասունցի հայերը։

Լոնդոնի մեր թղթակիցը հաղորդում է մեզ անգլիական թերթերում տպուած հետևեալ հեռագիրները.

Վիեննա, 16 մարտ.—Կ. Պոլսից 13 թուականով հասած լուրերը քննիչ յանձնաժողովի գործունէութեան մասին գոհացուցիչ լինելուց շատ հեռի են։ Օր օրի վրայ աւելի պարզւում է, որ կառավարութիւնը ամեն ջանք գործ է դնում արգելելու կարևոր վկաներին քննիչ յանձնաժողովի առաջ խօսելու։ Տեղական պաշտօնեաների այս վարմունքը վերագրւում է նրանց Կ. Պոլսից ստացած հրամաններին։ Կարծւում է, որ դրութիւնն այնպիսի է, որ խիստ հաւանական է, որ երեք պետութիւնները ստիպուած պիտի լինեն լուրջ դիմումներ անելու Բ. Դրանը։

Կ. Պոլիս, 17 մարտ. — Մուշի յանձնաժողովին օգնելու համար մի հայ թարգման դրկելու առաջարկը ընդդիմութեան է հանդիպում կառավարութեան կողմից, որ դէմ է որ և է հայ թարգմանի ներկայութեանը քննութեան միջոցին։ Երեք պետութիւնների դեսպանները պահանջեցին, որ Կարինի ֆրանսիական գեսպանութեան թարգմանը պետութիւնների ներկայացուցիչների տրամադրութեան տակ դրուի, և կարծւում է, թէ կառավարութիւնը պիտի համաձայնի։

Լոնդոնի մեր թղթակիցը գրում է.

Անգլիական «Standard» լրագրին հաղորդում են Պոլսից, Բ. Դուռը ֆրանսիական, անգլիական և ռուսական դեսպանների խնդիրքն ընդունել թոյլ տալուց, որ Հայաստան քննութեան գընացած յանձնաժողովը իւր յատուկ թարգմանիչն ունենայ։ Այստեղի ֆրանսիական հիւպատոսարանի դրագոմանը այդ պաշտօնի համար նշանակուեց և խսկոյն Մուշ ուղևորուեց։

«Daily Telegraph»-ի թղթակիցը հաղորդում է, որ Սասունի կոտորածների գործի համար կանչուած վկաներից մինչև անգամ նրանք, որոնք տրամադիր են յօգուտ կառավարութեան, ցուցմունքներ են տալիս, թէ հայ բնակիչները ոչ մի բանում մեղաւոր չեն և թէ զօրքերը կասկածելի կատաղած կոտորում էին անխնայ։

ՀԱՅԵՐԻ ԴՐՈՒԹԻՒՆԸ ԹԻՒՐՔԻԱՅՈՒՄ

Լոնդոնից մեր թղթակիցը գրում է մեզ.

Մարտի 17-ից Կ. Պոլսից հեռագրում են «Daily News»-ին և ուրիշ թերթերին հետևեալը.

Սըր Ֆիլիպ Քըրրի—Կ. Պոլսի բրիտանական դեսպանը—Բ. Դրան ուշադրութիւնը հրաւիրած լինելով Փոքր-Ասիայի քրիստոնեաների դրութեան վրայ, պաշտօնապէս պահանջւեց թէ միջոցներ են ձեռք առնուել նրանց կեանքն ու գոյքը պաշտպանելու համար։

Բ. Դուռը մի ծանուցագիր է դրկել նոյնպէս միստր Թըրրելին, Ամերիկայի ներկայացուցչին, թէ այս նպատակով հրամաններ են դրկուած Փոքր-Ասիայի նահանգապետներին։

Բ. Դրան մէջ մեծ յուզում է տիրում հայերի պատրիարք ամենապատիւ Իզմիրլեանի բռնած եռանդալից դիրքի պատճառով, այն տեղեկագրի մէջ, որ նա վերջերս ներկայացրեց կառավարութեանը, բողոքելով Սասունի կոտորածների դէմ, որի մանրամասների մասին նա հաղորդել էր մի նախորդ գրութեան մէջ։

ԿԻՐԵՂ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍՐԱՊԵԱՆ

† 8 մարտի 1895 թ. ի Նոր-Նախիջևան

(«Նոր-Դար»-ին Ռոստովից)

Ընդհանուր հայութեան մեծ կորուստ. այլ ևս չկայ Կիւրեղ սրբազանը։

Այսօր, մարտի 9-ին, Նախիջևանցի և ռոստովցի հայերիս հասաւ անսպասելի տխուր լուրը, մինչդեռ մենք անհամբերութեամբ սպասում էինք՝ հէ այսօր մի մխիթարիչ և ուրախալի լուր կըլսենք սրբազան հօր առողջութեան մասին։ Զնայելով որ Կիւրեղ եպիսկոպոսին ամենայն օր Նախիջևանի գրեթէ բոլոր բժիշկները, նոյնպէս և Ռոստովի նրա բարեկամ ընտիր բժիշկներն ամենայն ջանք թափեցնում էին և օր ու գիշեր հոգում էին նրան առողջացնելու, բայց բոլոր ջանքն ու աշխատանքն իզուր անցան. նա այլ ևս չկարողացաւ դիմադրել իւր ցաւին։ Նրա ցաւն էր սաստիկ տիֆ և տաքութիւն. այդ ցաւը դիպել էր Նախիջևան ժամանելուց մի երկու օր վերջը։ Սկզբում նա նշանակութիւն չէր տուած այդ հիւանդութեան և երբ ուզեցել էին բժիշկ կանչել, նա մերժել էր, բայց վերջը, երբ հիւանդութիւնը սաստկացաւ, բժիշկներ շատ շուտ եկան և յոյս էլ ունէին առողջացնելու. բայց սրբազան հայրը չկարողացաւ էլ դիմադրել։

Դեռ յոյսներս կտրած չէինք և սպասում էինք, որ սրբազան հայրը կառողջանայ, ամենքի բերանից լսում էինք հետևեալ խօսքերը, երբ յուսահատուած մէկն ասում էր միւսին, թէ այս վերջին օրերս սրբազան հօր հիւանդութիւնը սաստկացել է և հազիւ թէ առողջանայ.—Աստուած նրան կառողջացնէ, նա չի մեռնիլ, որովհետև չատչատերը աղօթում են նրա առողջութեան համար։ Բայց Աստուծոյ կամքն է եղել կոչել նրան Իւր մօտ։ Ցանձին սրբազան Կիւրեղ հօր հայ ժողովրդի կորուստը մեծ է. Նա այլ ևս չունի այն արթուն հովուին, որ գիշեր-ցերեկ անդադար հսկում էր իւր սիրելի հօտին. Նա այլ ևս չունի այն ազնիւ, անաչառ և ճշմարտասէր հովիւը, որպիսին էր ի Տէր հանգեալ Կիւրեղ սրբազանը։ Ամբողջ հայ հոգևորականութիւնը կորցրեց այն ճշմարտախօս քարոզիչ պաշտօնակցին, որը միշտ իւր բարի խօսքերով և գործերով օրինակ է եղել ամենքին։ Վերջապէս Նոր-Նախիջևանի և Ռոստովի հայ հասարակութիւնը կորցրեց այն սիրած և յարգուած հօրը, որի օրինակելի շատ քարոզները լսել են սրանից 5 կամ 6 տարի առաջ։

Տեղւոյս թեմական դպրանոցի ուսումնաւարտ աշակերտների սրտի ցաւը շատ մեծ է և անմխիթարելի, որովհետև հանգուցեալ սրբազան հայրը իւր Նախիջևանի յաջորդ եղած ժամանակ ուսուցիչ էր նրանց և ամենքի հետ նա ընկեր է եղել խօսքի բուն նշանակութեամբ։

Սրբազան հօր հիւանդութեան մասին բժիշկներն ասել էին, որ եթէ չորեքշաբթի գիշերն էլ կարողանայ դիմադրել, կանցնի, և նա մահից ազատուած է։ Բայց երեկոյեան մինչև ժամը 9-ը միայն կարողացաւ դիմանալ։

Հիւանդութիւնը տարափոխիկ լինելով, նրա մարմինն այդ գիշեր և եթ իսկոյն տեղափոխեցին ս. Խաչ վանքը, ուր միւս օրը հողին յանձնեն։

Ցաւալի բան է, որ եթէ նրա հիւանդութիւնն այդպիսի վտանգաւոր հիւանդութիւն չլինէր, շատ շքեղ կերպով պիտի կատարուէր յուղարկաւորութիւնը։

Վեհափառ Հայրապետը, երբ նրան յայտնեցին սրբազան հօր մահը, անչափ տխրեց և ասաց. «Ես զրկուեցայ իմ աջ ձեռքից»։

Կիւրեղ սրբազանին Նոր-Նախիջևանում պ. Գաբրիէլ Պոպովը իւր տանն էր հրաւիրել իջևանելու, այնտեղ էլ վերջացրեց իւր կեանքը։ Շատ դժւելի

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԱԿՆԱՐԿՆԵՐ

ՄԱՄՈՒԼԻ ՇՈՒՐՋԸ

Այսպիսի տեսութիւնների անհրաժեշտութիւնը։ Նոր ժողովածու։ «Մուրճ»-ի բանաստեղծութիւնները. Գէօթէի «Հերման և Դորոթէա»։ Կ. Պոլսի թերթերը։

Մենք մտադիր ենք ժամանակ առ ժամանակ պատել մամուլի չուրջը. և ոչ միայն հայոց, այլ և օտարազգի։ Դա շատ տարածուած սովորութիւն է և միայն մեզ մօտ է, որ այդ գովելի սովորութիւնը բացակայում է։

Մամուլի տեսութիւն անելով մենք, ի հարկէ, չպէտք է հասկանանք բոլոր մամուլի տեսութիւն, կամ որոշ օրաթերթերի ու ամսագրերի բոլոր յօդուածների տեսութիւնը. դա անկարելի բան է։ Կարելի չէ նոյնպէս սպասել, որ մեր ակնարկներում մենք երկար ու մանրամասն քննութիւններ տանք։ Մենք կաշխատենք ընթերցողների առաջ մատնացոյց լինել այն գրուածքների վրայ, որոնք արժանի են ուշադրութեան, աւելացնելով մեր կողմից որոշ բացատրութիւններ, կամ մեր կարծիքները. միևնոյն ժամանակը կաշխատենք ցոյց տալ այս կամ այն հրատարակութեան թերի կողմերը։ Այսպիսի մի տեսութիւն, մեր կարծիքով, անհրաժեշտ է հենց այն պատճառով, որ շատ քչերը մեզնից մի երկու հրատարակութիւններից աւելի են ստանում։ Մեծ քաղաքներում տարողները էլի կարող են օգտուել ակումբներից կամ մատենադարան-ընթերցարաններից. իսկ ինչ անեն մութ անկիւններում ապրողները։ Բացի դրանից, այսպիսի տեսութիւնները շատ անգամ կարող են օգնել ընթերցանելի նիւթի ընտրութեան գործումն էլ, ցոյց տալով որ բանն արժանի է ուշադրութեան, և որի ընթերցանութեան վրայ, ընդհակառակը, չարժէ ժամանակ կորցնել։

Առաջին յօդուածում կըպատենք հայոց մամուլի չուրջը, միւս անգամ—ռուսաց։

1895 թուականից, ինչպէս կարդացինք յայտարարութիւնների մէջ, հրատարակուելու է գրականական մի նոր հանդէս-ժողովածու, տարէնը երկու անգամ, «Խօսք» վերնագրով։ «Մշակը» մի յօդուածով աւետում է գանում այդ նոր հրատարակութիւնը. այս առթիւ պէտք է նկատենք, որ «Մշակ»-ը միշտ հակառակ է եղել ամեն մի «նոր» հրատարակութեան։ Իւր ժամանակին նա խսկոյն յարձակուեց նոր լոյս աշխարհ եկող «Նոր-Դար»-ի վրայ. Մ. Բարխուդարեանի «Հանդէսը» դեռ լոյս չէր տեսել, երբ երեւց «Մշակ»-ում Խ. Մ. ստորագրութեամբ մի յարձակողական յօդուած։ Այժմ էլ չի ուզում «Խօսք»-ի երեան գալը՝ «Чуетъ кошка чье мясо съѣла». «Խօսք»-ի խմբագիր-հրատարակիչն է երգչական փաստաբան Ստեփաննոս Մամիկոնեանը, որը վերջին կաթողիկոսական ընտրութեան ժամանակ Բեսարաբիոյ թեմի պատգամաւորն էր և ամենքի ուշադրութիւնը գրաւեց իւր անկախ դիրքով և իւր բացարձակ ազգասիրութիւնով թէ ինքը Արիստակէս Սեդրակեանին քուէ չի տալ։ Այս բաւական է, որ «Խօսք»-ը «Մշակ»-ին դուր չգայ։ Մենք, ընդհակառակը, շատ ուրախ ենք այդպիսի նոր ժողովածուների երևալուն. միայն որ նիւթը լուրջ, հարուստ և հետաքրքրական լինի։ Իսկ իմանալով Մոսկուայի նոր հրատարակութեան պ. խմբագրի յատկութիւնները, մենք յոյս ունենք, որ «Խօսքը» կըհամապատասխանէ այդ պայմաններին և լոյս տեսնելուց յետոյ պարզ կըլինի մեր սպասումներին։ Ցանկանում ենք աջողութիւն և յարատևութիւն։

Փետրուարի կէսն էր արդէն, բայց մենք նոր ստացանք «Մուրճ»-ի յունուարի տետրը. ամեն տեղ կան ամսագրեր, որոնք հրատարակւում են կամ ամսի սկզբին, կամ միջին, կամ վերջին. բայց միմիայն մեր, հայերիս, մէջ է որ ամսագրները դուրս են գալիս միւս ամսուայ կիսին։ «Մուրճ»-ի վիճակումն է և «Արարատը»։ «Արարատը», ասենք, ստիպուած է հետևել ս. Էջմիածնի տոլորանական վարչութեան հրամուտ փիլիսոփայութեան՝ «ևաւաշ, ևաւաշ» կամ «тише ѣдешь—дальше будешь», բայց «Մուրճ»-ին ինչն է ստիպում այդքան ուշանալ։

Ամսագրի շապկի վրայ տեսնելով «եօթերորդ տարի» մենք ի սրտէ ուրախացանք. Ռուսիայի ամսագրների համար դա ամբողջ մի «դար» է։ Առաջին համարում—ինչպէս լինում է բոլոր «առաջին» համարներում— բաւական նիւթ է տրուած. նիւթերն էլ բովանդակութեան կողմից բաւականի բազմակողմանի են։ Բայց գեղարուեստական մասը էլի կաղում է։ Սկսենք բանաստեղծութիւններից։ Եօթը բանաստեղծ. արժէք տալով Ադամեանի Նմանողութիւնը, Ցակոբեանի «Բուրդի գազին» և Ծատուրեանի վերջին բանաստեղծութիւնը։ Իսկ ինչ կըվերաբերի Լ. Մանուէլեանի «Հիասթափութեան էլէգիային», չգիտենք ինչ ասենք. կարդացէք ինքներդ.

ՀԻԱՍԹԱՓՈՒԹԵԱՆ ԷԼԷԳԻԱ

Ե՛տ տուր, ե՛տ տուր ինձ իմ այն փայլուն յոյսերը,
Որ աչքէտի ծաղրով դու ջարդ ու փշուր արիր.
Ետ տուր իմ յոյսերը, ե՛տ տուր ինձ իմ սէրը,
Որ դու վայրենաբար քո ոտի տակ տիր։

—

Օ, եթէ միայն կայ կեանք հետ մահուան, երբ մարդ պիտի յիշէ աշխարհային գործերը,
Գիտցիր, քո դէմ կանգնած դարձեալ պիտի գոռամ
Ետ տուր ինձ իմ սէրը, ետ տուր իմ յոյսերը։

Մեզ մնում է բացականչել՝

Ետ տուէք նրա սէրը, ետ տուէք նրա յոյսերը,
Որ նա չկրկնէ իւր զառանցանքները․․

Ասացէք, ի սէր Աստուծոյ, որտեղ է այստեղ «բանաստեղծութիւնը», պոէզիան. եթէ սա երրորդ դասարանի աշակերտ լինէր գրած, մենք գիտէինք, թէ ինչ կանէինք. բայց սխր պ. Մանուէլեանը համալսարանական է, ուսուցիչ է, ևմ է դուրս գալիս Ֆրանց Մօօրի դերում… վերջապէս ունի և մի քանի շատ սիրուն ու յաջող բանաստեղծութիւններ։ Եթէ պ. Մանուէլեանը տալում է այսպիսի «բանաստեղծութիւններ», հապա ուրեմն ինչ անեն մեր տղէտները։

Այս ուեթը տողանին կարդալուց յետոյ մենք ամենևին չզարմացանք, երբ «Տարազ»-ի № 6-ում կարդացինք ամն Կայծի «Անուշ» խորագրով ահագին «բանաստեղծութիւնը», որի մէջ կան այսպիսի գոհարներ.

Դա Անուշ բերդն է, հողով և մոքով,
Դա Անուշ բերդն է, ինչպէս անունով…
Գնա ու հասկացիր դրա միտքը։

էր պատուելի պ. Պօղոսի սրբազան հօր ցոյց տուած խնամքը և ամենայն ինչ չէր խնայած իւր կողմից նրան առողջացնելու։ Վեհափառ Հայրապետին բժիշկները խորհուրդ չէին տալիս ոչ այցելելու և ոչ էլ մահուան վերջին հրաժեշտը տալու իւր հաւատարիմ եպիսկոպոսին։

Որքան մեծ էր Նախիջևանցոց ուրախութիւնը Հայրիկի գալստեամբ, նոյնքան մեծ եղաւ վիշտը սրբազան Կիւրեղ եպիսկոպոսի մահուամբ։

Գ. Ք.

Ռոստով-Դոնի-վրայ, 9 մարտի։

ՔՐՈՆԻԿՈՆ

Թիֆլիսի պ. Նահանգապետը հաստատել է հանգուցեալ Պ. Իզմայլեանի յուղարկաւորութեան կարգը։ Տխուր յուղարկաւորութիւնը առաւօտեան ժամի 10-ին կսկսուի երկաթուղու կայարանից, ուղղուելով դէպի Վօկզալնայա փողոցը, յետոյ շարունակելով առաջ Ելիզաւէտինսկայա, Սադովայա, Միխայիլովսկայա և ապա Կիրոչնայա փողոցներով կանցնի Վերայի կամուրջը և կբարձրանայ Վերայի դաբիվերը, յետոյ Գոլովինսկի պրոսպեկտով և Դվորցովայա փողոցով կերթայ Երևանեան հրապարակը, որտեղ քաղաքային տան շինութեան առաջ կարգ. կըկատարուի հանգուցեալ քաղաքագլուխ Իզմայլեանի դագաղի վրայ։ Այնուհետև տխուր յուղարկաւորութիւնը կերթայ Պուշկինսկայա փողոցով և Սոլդատսկի բազարով դէպի Վանքի աւագ եկեղեցին։

—

ՇՈՒՇՈՒՑ.—Փետրուարի 28-ին այստեղ ժամանեց արժ. Սաթունեան հայր սուրբը, որին Վեհափառ Հայրապետը, ինչպէս յայտնի է, կոնդակով նշանակել է ժամանակաւոր կառավարիչ Ղարաբաղու թեմի։ Արժ. հայր սուրբը դեռ մինչև այսօր իւր պաշտօնը չէ ստանձնել, որովհետև այդ մասին սպասում է Վեհափառ Կաթողիկոսի վերջնական կարգադրութեանը։

—Մարտ ամսի 11-ին տեղւոյս Ագուլեաց եկեղեցում կատարուեց հոգեհանգիստ ի Տէր հանգուցեալ Կիւրեղ սրբազան եպիսկոպոսի յիշատակին։ Հոգեհանգստին և ս. պատարագին ներկայ էին հայոց օր. դպ. և թեմ. դպ. աշակերտները և ամբողջ ուսուցչական խումբը։ Հոգեհանգստի ժամանակ պ. Կանայեանցը որ հանգուցեալի նախկին սաներիցն էր մի երկու խօսք ասաց հանգուցեալի մասին։ Կիւրեղ ս. եպիսկոպոսի մահուան գոյժը խորը տպաւորութիւն է գործել Շուշեցիների վրայ, որոնք անցեալ ամառը քանիցս անգամ լսել էին նրա քարոզները։

—

Թաւրիզից հաղորդում են, «Կավկազ» լրագրին, որ Թիֆլիսում պարսից ընդհանուր հիւպատոս նշանակուել է Մահմեդ Իբրահիմ-խան Մուավէն-Էդ-Դովլէ, որ Թաւրիզում արտաքին գործերի մինիստրութեան դեպարտամենտի կառավարիչ է եղած։ Թիֆլիսում սպասում են պարսից նոր հիւպատոսին 2-3 շաբաթից յետոյ։

—

ՄԵՐՎԻՑ.—Մարտի 4-ին Մերվ ժամանեց Անդրկասպեան երկրի կառավարիչ գեներալ Կուրոպատկինը։ Երկաթուղու կայարանում ընդ առաջ էին դուրս եկել ռուսաց զինուորական բոլոր բարձր աստիճանաւորները, ռուսները, հայերը և այլազգիները։ Հետևեալ օրը ի պատիւ երկրիս կառավարչի փառաւոր ճաշ էր պատրաստուած։ Հրաժեշտի օրը տեղային թէքէները մատուցին զանազան խնդրագրեր։ Այնուհետև հայ հասարակութեան անդամներից մի քանիսը, որոնց թւումն էին և հոգաբարձուներ, ներկայացան պ. Կուրոպատկինին և խնդրեցին տալիս հայոց եկեղեցու թերի մնացած շինութիւնն աւարտելու թոյլտւութեան մասին. նաև յայտնեցին թէ իրենց խնդրագրի պատասխանը մինչև օրս մնացել է առանց հետևանքի և սպասում են իւր տնօրինութեանը։

Երկրիս կառավարիչը յուսադրեց և յայտնեց թէ հայերի խնդիրքը կըյարգուի, աւելացնելով որ գործն իրենից չէ կախուած, այլ ինքը կըդիմէ ուր հարկն է։ Նոյնպէս յայտնեց, որ հայերը եթէ ուզում են իրենց եկեղեցու հաստատման թոյլտւութիւնը շուտ գլուխ բերել, պէտք է մի այլ խնդրագրով, հասարակութեան ստորագրութեամբ դիմեն իրեն և խնդրագրում յիշեն, որ մտադիր են առ միշտ մնալ Մերվում, իբրև հաստատ բնակիչ։

Հայերը խնդրեցին, որ առ այժմ գոնէ թոյլ տրուի թերի մնացած եկեղեցու չորս պատերի գլուխը մի բանով ծածկելու և ժամանակաւորապէս այնտեղ աղօթելու։ Թոյլտւութիւն ստացան ժամանակաւորապէս աղօթատուն ունենալու միայն այլ տեղում։

—

Թիֆլիսի նահանգական վարչութեան բժշկական բաժանմունքի տեղեկութիւններից երևում է, որ Թիֆլիսի գաւառի Մանգլիս Սեզգիևսկի աւաններում և Բորչալու գաւառի Բոլնիս-Խաչին և Ախսաւր գիւղերում ծաղիկ հիւանդութիւն է տարածուած, որից մեռնում են շատ երեխաներ։ Թելաւի գաւառում տիրում է կարմրուկ հիւանդութիւնը։

—

ՇԱՄԱԽՈՒՑ.—Մարտի 6-ին յայտնի աւազակապետ Թալիբը, որ իւր բարբարոսութեամբ 2-3 տարի է ինչ ահ ու սարսափի մէջ էր դցել Շամախու ու Գեօկչայի գաւառները, իւր աւազակախմբով գնում է Քիւրդամիր գաւառակին Մոլլաքենդ և Սորսոր Թերքանակ գիւղերի մէջ տեղը գտնուող ձմեռանոցը (ղշլաղ)։ Այնտեղ նա գտնում է Մոլլաքենդի տանուտէրի օգնականին, որը ոչխար է տանելիս եղել գիւղը նոյն տեղում գտնուող հօտից։ Աւազակապետ Թալիբը վաղուց վրէժ ունենալով Մոլլաքենդ հասարակութեան դէմ խփում ու սպանում է յիշեալ տանուտէրի օգնականին։ Եղելութեան մասին իսկոյն յայտնում են այն օրը Մոլլաքենդում գտնուող Լաբինսկի հեծելազնդի երիտասարդ մի սպայի, որը 40 կազակներով աւազակներին հետամուտ լինելու և ձերբակալելու համար նշանակուած է եղել Քիւրդամիր գաւառակում։ Այդ լուրը ստանալուն պէս, առանց մի րոպէ կորցնելու, յիշեալ ըսպան իւր մօտ գտնուած 10-12 կազակներով շտապում է անցքի տեղը։ Ըսկսւում է հրացանաձգութիւն կազակների և աւազակների մէջ։ Սպան քաջալերելով կազակներին, մերկացրած սուրը ձեռքին յարձակւում է աւազակապետի վրայ ու տեղն ու տեղը սպանում նրան և մի ուրիշին։ Սպանուած են հինգ աւազակ ու երկու կազակ, վիրաւորուած են մի աւազակ և հինգ կազակ։ Վիրաւորուած աւազակը միւս երկու ընկերների հետ հէնց կռուի ժամանակ անհետանում է. նրանց բռնելու համար խիստ միջոցներ են ձեռք առնուած։

—

Ինչպէս հաղորդում են լրագրները, Կովկասեան (Պեատիգորսկի) հանքային ջրերի կառավարիչ (կոմիսար) է նշանակւում Աստրախանի պետական խորհրդական Բաշկիրովը նախկին Բերտենսոնի տեղ։ Պեատիգորսկի հանքային ջրերի կառավարութիւնը մասնաւոր անձի, Ռաստովի քաղաքագլուխ՝ հանգ. Բայկովի ձեռքից առնելուց յետոյ, այս չորրորդ կառավարիչն է որ փոխւում է վերոյիշեալ հանքային ջրերում։ Զընայելով կառավարութեան ջանքերին, Ռուսիայի հիւանդները գերադասում են աւելի գնալ արտասահմանի հանքային ջրերը, քան բժշկուել իրենց հայրենիքում։

—

ՇԱՄԱԽՈՒՑ —Քաղաքումս ու գաւառում մանուկների մէջ սաստիկ տարածուած են կարմրուկ և ինֆլուէնցա հիւանդութիւնները։ Մահուան դէպքեր շատ են պատահում։

—

Պեատիգորսկի մօտ գտնուող հռչակաւոր «Նարզան» ասուած հանքային հալայ աղբիւրը, որ օգտակար էր հիւանդութիւնների համար, մի քանի գիտնականների ասելով, փոփոխութեան է ենթարկուել իւր բաղկացուցիչ մասերի վերաբերմամբ և նրա բուժիչ զօրութիւնը թուլացել։ Այս փոփոխութիւնը տեղի ունեցաւ նրանից յետոյ, երբ այդ ջուրը աւելի մեծ քանակութեամբ ստանալու դիտաւորութեամբ մի քանի ինժեներական աշխատութիւններ կատարուեցին նրա վերաբերմամբ։ Այժմ «Ժողովրդական առողջապահական ընկերութիւնը» կասկածելով վերոյիշեալ նշանաւոր հանքային ջրի ապագայի մասին և այդ կասկածը քննադատելու, ինչպէս հաղորդում է «Նով.» լրագիրը, մի յանձնաժողով է կազմել, ուր կըքննուի այդ հարցը, այլ և կըկարդացուի ինժեներ Ա. Ի. Նեպլյուևնսկու կարծիքը։ Նեպլյուևնսկին 18 տարի, իբրև հանքային ինժեներ, մասնակցել է Կովկասեան հանքային ջրերի համար եղած աշխատութիւններին և ծանօթ է գործի հետ։

—

Մարտի 14-ին ոստիկանութիւնը գտնում է Թիֆլիսի Հավլաբարի թաղի մի փողոցում մի մեռած կնոջ, Մարիա Կրաշենկօֆ դիակը։ Ոստիկանութեան հարցուփորձից երևում է, որ, դժբախտ կինը հոգեկան հիւանդութիւն ունենալով, մարտ 12-ին գնացել է Միքայելեան հիւանդանոցը, բայց մերժել են նրան ընդունել տեղ չլինելու պատճառով և խեղճ կինը մեռնում է փողոցում։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ.

—

Պատուական «Նոր-Դար»-ի № 44-ում Պօլսից տպուած է մի լուր, որով լրատուն նկարագրելով Փանեան ծերունի քահանային օգնական ընտրելու համար կայացած ծխական ժողովը, շտապում է աշխարհին յայտնել, որ այդ ժողո Փոթի քաղաքի Խուցեան քահանան, տանելով 16 ձայն, «ընտրուել և գա է Պօլսոյ քահանայ»։

Ճշմարիտ է, յիշեալ ժողովը կայա համաձայն կանոնադրութեան ծխակ ների $^1/_4$ մասի ներկայութեամբ և ցարուել է նրանց ձեռնադրուած հանների փոխադրութեան անկ ութիւնը, համաձայն հանգուցեա որդ կաթողիկոսի շրջաբերականի դէմ ցայսօր ոչինչ կարգադրութիւ եղել և յաջորդ գահակալներից, և հանների ձեռնադրութեան ժամ տուած ստորագրութեան, սակայն կանների ի նկատի ունենալով փ տեղափոխութիւններն և չիմանալո րանց արտակարգ հանգամանքներ առաջ եկած լինելը, չնայած բացա թիւններիս, ցանկացան քուէարկել խադրուել ցանկացող քահանաներ ապա այդ բանի մասին յայտնելով բացակայող ծխականներին, լրացնե րինասահման (ծխականների $^2/_3$) ստ գրութեանց թիւը և դիմել Սրբազան առաջնորդին, որ [illegible] է, խադրուի Խուցեան քահանան, իսկ կաւակ դէպքում, ուսուցչական ցան ընտրել ամենաարժանաւոր երկու և առաջարկել թեմակալ առաջն բարեհայեցողութեան. իսկ ինչ կըվ բերի Տէր Գրիգոր Փանեանցի դադա լինելուն, այդ առաջ է եկել նրա բութեան և տուած հրաժարականի հիւ։ Ահա այս է գործի իսկական լութիւնը, որը Պօլսոյ լրատուն չրջումներով յայտնուած է և պատ կան «Նոր-Դար»-ին, ցոյց տալու, թէ ես փարուել եմ հակառակ օ և թեմակալ իշխանութեան իրաւ թեան, որին վերապահուած են նման գործերի վերջնական վճիռ

Առաջնորդական փոխանորդ՝

Եղիշէ վարդապետ Մուրադեան

11 մարտի։

ԹՈՒՐՔՄԷՆՆԵՐԸ ԱՆԴՐԿԱՍՊԵԱ ԵՐԿՐՈՒՄ

—

1880 թ. մարտի 12-ին թուրքմէ րը ընկճուելով ռուսաց զէնքի վերջնականապէս ընկան ռուսաց տի պետութեան տակ։ Շատերի կարծ այն էր՝ թէ թուրքմէնները միանգա հպատակութիւն ցոյց տալով ռուս պետութեան, երբէք չեն դադարել նաւոր արշաւանքներից, ի վնաս պետութեան, ինչպէս որ չգադարի այդպիսի արշաւանքներից լեզգին

Մինչդեռ այսպիսի անգոյն և անմիտ բանաստեղծութիւններով է ողողւում մեր գրականութիւնը (յիշեցէք զանազան Թառլանեանների, Մոճոռեանների, Սրինգների առանձին հրատարակութիւնները)—ահա «Արարատ»-ի յունուարի համարում զետեղուած են XVIII-րդ դարում ապրող Ղափանցւոյ բանաստեղծութիւններից մի քանիսը. տեսէք որքան զգացմունք և բանաստեղծական աւիւն կայ այդ անյայտ երգչի երգերում. որպիսի նուրբ ճաշակ և որպիսի գեղարուեստական ձև։ Թող ինքն ընթերցողը կարդայ և ստուգէ մեր ասածը, թող համեմատէ մեր ոտանաւոր գրողներին այդ տաղանդաւոր բանաստեղծի հետ. իսկ մենք չենք կարող իբրև նմուշ չբերել գոնէ մի երկու տուն նրա բանաստեղծութիւններից։ Ահա.

ԶՎԱՐԴԻ ԻՄԱՆԱԼՈՅ

Հառաչելով, աղաչելով ձայնիւ մաղթեմ լալագին
Ըզգուշացիր յորժամ հընչէ՝ գըժնեայ հողմը սաստկագին.
Մինչ դու թափիս՝ ես մեռանեմ, մի է իմ և քո հոգին.
Իմ անըման վարդ վարդ.
Զարծանք զարնան վարդ վարդ.
Մատիդ առ իս,
Միտ դիր բանիս.
Եւ հայեաց յիս
Տես թէ զիարդ կիզանեմ։

Կամ ահա այս տունը մի ուրիշ բանաստեղծութիւնից՝

Զիլ գիլ ձայներով համեղ տաղերով
Գինին տառուցէք փայլուն պաղերով.
Վարդը փնջեցէք թօփ թօփ շաղերով
Պուտ պուտ ցօղերով
Գեղգեղեալ գոչէ
Կանչէ հառաչէ՝
Պլպուլն երամով խրով։

Ուշադրութիւն դարձրէք այս բանաստեղծի տաղաչափական արուեստի և լեզուի ճոխութեան վրայ, որ կողմից մասնաւորապէս թոյլ են մեր նոր բանաստեղծները։ Իսկ մեր անկոչ բանաստեղծներին մենք խորհուրդ կտայինք, որ սեփական անընդունակութիւնը մեզ ցոյց տալու փոխարէն—գտնեն և հրատարակեն ուրիշների, անցեալ ժամանակներում ապրող՝ տաղանդների նմուշները։ Անշուշտ Ղափանցին միակը չէ. մենք ունենք անշուշտ նրա նման շատ անյայտ բանաստեղծներ։ Այո, պարոններ, եթէ դուք այդքան սէր ու եռանդ ունէք գրքեր հրատարակելու, հազարապատիկ աւելի լաւ է, որ աշխատէք գտնել այդ անյայտ բանաստեղծներին և դրանց գրուածքները հրատարակէք։ Դրանով դուք գոնէ մի օգտակար գործ կատարած կըլինէիք, և ձեզնից ամեն ոք շնորհակալ կըլինէր։

Ցաւալի է, որքան աղքատ է մեր թարգմանական գրականութիւնը։ Միմիայն երկու մարդ կայ, որոնք մասնաւորապէս թարգմանութիւնով են զբաղւում։ Բացի դրանից, մեր թարգմանութիւնները միշտ վատ լեզւով են լինում։ Եւ նկատւում է, որ առհասարակ կլասիկ գրուածքների թարգմանութիւնից խոյս են տալիս մեր թարգմանիչները։ Այս ի նկատի ունենալով, մենք պէտք է շնորհակալ լինենք բժ. Լևոն Տիգրանեանցից, որ նա աշխատում է մեր թարգմանական գրականութեան պակասը լցուցանել և ձեռնարկել Բ. Գէօթէի գլխաւոր երկերի թարգմանութեանը։ Բայց պ. Տիգրանեանցը բանաստեղծ չէ, և նրա թարգմանութիւնները պրոզայով են. դրանից անշուշտ երկը կիսով չափ կորցնում է իւր արժանիքները։ «Մուրճ»-ի յունուարի համարում զետեղուած է Գէօթէի գեղեցիկ, համերական գրուածքի՝ «Հերման և Դորոթէայ»-ի թարգմանութիւնը։ Համերական ենք ասում, որովհետև Գէօթէն այս վիպասանութիւնը ստեղծելիս մտքումն ունէր «Ոդիսական»-ի նման մի գրուածք տալ. և նրա վէպի մէջ կարելի է ցոյց տալ շատ տեղեր, որոնք յոյն հանճարի նմանողութեանց արդիւնք են։ Սակայն թարգմանութիւնը մեզ չի գոհացնում գլխաւորապէս այն պատճառով, որ շատ տեղ ուղղակի սխալ է թարգմանուած (օր. Antheil նշանակում է՝ բաժին, ճակատագիր, վիճակ և ոչ թէ՝ մասնակցութիւն. gekehrt=աւեալ, և ոչ թէ փոխուել է. և այլն). կարևոր խօսքեր բաց են թողուած. ռէմինէսցէնցիաները լաւ չեն թարգմանուած և չի երևում, որ ռէմինէսցէնցիաներ են։

Թարգմանութեան մի քանի նախադասութիւնները ծանր են և մինչև իսկ անհասկանալի՝ օրինակ. «Բայց հայրը շարունակում էր նոյն կերպով՝ ինչպէս որ սկսել էր. երբ մի մարդու մէջ բան չկայ՝ նա ոչինչ չի կարող դուրս գալ և դժուար թէ սրտիս խորհուրդը մի որ և է անգամ կատարուի, այն է որ որդիս ինձնից աւելի լինի» էջ 25)։

Յօդուածներից հետաքրքրական են՝ Մ. Յովհաննիսեանի «Խոշոր ինդուստրիայի զարգացումը» և բժ. Արծրունու՝ «Բնական հիպնոտիզմ»։ Սակայն վերջինիս արտայայտած շատ մտքերը ոչ միայն վիճելի են, այլ ուղղակի—յետադիմական։ Իսկ առաջին յօդուածը մեծամասնութեան համար անհասկանալի է և անօգուտ, քանի որ մեզանում շատ քչերն են ծանօթ քաղաքատնտեսութեան պատմութեան և գլխաւոր սկզբունքի հետ. առաջ պէտք է—հիմնական սկզբունքների հետ և վարդապետութեան ծանօթացնող յօդուածներ տալ, յետոյ արդէն «խոշոր ինդուստրիայից» խօսել։

«Մուրճ»-ի մէջ աչքի է ընկնում պատմական-քննադատական մասի պակասութիւնը. մինչդեռ դա մի ամա անհրաժեշտ մաս պիտի կազմէ։

Վերջացնելով յօդուածս, երկու էլ առնենք Պոլսի թերթերի մասին ջերս, անցեալ տարուայ հետ համե տած՝ Պոլսի թերթերը սկսել են ա հայ դառնալ. մի ժամանակ Պոլսի Պարիզի մանր թերթերը երբեմն զանազանւում։ Բայց և այնպէս ա էլ պէտք է խոստովանել, որ մեր բորդ մասաւոր կեդրոնի թերթերը անխնամ են խմբագրւում և բաւա ջրալի են։ «Հայրենիք»-ը անդադար ռաջին երեսում անպատճառ խօսում «Նանսի» ուսանողուհի ուղարկելու սին. ֆէլիէտոնում, ինչպէս և «Ար ք»-ում, տալւում է և երևի մինչև Ք տոսի երկրորդ գալուստն էլ պիտի րունակուի մի ինչ-որ թարգման վէպ։ Յետոյ բոլոր պոլսի խմբագ ները ի չարն են գործ դնում բոլոր ժամանակ թարգմանութիւնն նորութիւններ «Revue de Revue տուած. այդ մենք ինքներս էլ կըկ դանք. դուք ձեր կեանքի հետ ծանօթացրէք, ձեր գործերից պատմեցէք։

Առ այժմ այսքան. միւս անգամ օտար մամուլի մասին կըխօսենք։

Մինաս Բերբերեան

չէչէնները միանգամից հպատակուելուց յետոյ։ Սակայն իրողութիւնը այլ կերպ է ցոյց տալիս։

Ռուսաց պետութեան մէջ ոչ մի մահմեդական այնպէս շուտ չըմբռնեց տիրապետող պետութեան նպատակը, որքան Թուրքմէնները. դրանք հպատակուելով ռուսաց Գահին, չեղաւ մի անգամ, որ ցոյց տային իրենց անբաւականութիւնը։ Շնորհիւ ռուսաց արդի կառավարութեան եղանակին, Թուրքմէնները թողեցին իրենց հին արհեստը—ասպատակութիւն ու աւազակութիւնը։

Թուրքմէնները բնակւում են մեծ մասամբ Կասպից ծովի արեւելեան ափերից սկսած մինչեւ Ամու-Դարիա գետը, Քուրան-դաղ և Կապէտ-դաղ լեռների փէշերում. դրանք բնակւում են վրաններում, սակայն դրանց չի կարելի անուանել ոչ թափառական, ինչպէս քրդերը, և ոչ նստակեաց, թէև աւելի յարմար կըլինի նստակեաց անուանել, քանի որ դրանց մեծ մասը բնակւում է վրանաչէն գիւղերում, առանց չուելու մէկ տեղից միւս տեղ։ Իրաւ է, կան դրանց մէջ ցեղեր, որոնց պարապմունքը միայն խաշնարածութիւնն է և իրենց արհեստից ստիպուած թափառում են տանից (ձմեռանոց) եայլաղ (ամառանոց), եայլաղից—տուն, բայց դրանք բացառութիւններ են կազմում։

Ոչ մի ազգ այնքան սրամիտ, աւանդապահ ու ճշմարիտ չէ, որքան Թուրքմէնը։ Ով որ դրանց մօտ փոքր ի շատէ շփուել է, կամ մի որ և է գործ է ունեցել, նա անկասկած տեսած կըլինի դրանց սրամտութիւնը։ Ենթադրենք, որ դրանց հետ վաճառականական մի գործ ունէք և ուզում էք հաշիւ տեսնել. մինչդեռ դուք համրիչի օգնութեամբ, կամ թղթի վրայ կատարակների զանազան գործողութիւնների միջոցով աշխատում էք վճռել և վերջնական ուղիղ պատասխան ստանալ, նա արդէն վճռած պատասխանը իւր մտքում, հետաքրքրութեամբ նայում է ձեր գրել մտնելուդ։ Պատասխանը ասում էք՝ թէ այսքան է, նա գլուխը բացասական կերպով շարժելով պատասխանում է. «եօխ դողան, նամա բիր գալըմ գալըր» (ոչ եղբայր, մի փոքր բան մնում է)։ Հարցնում էք. «Ի՞նչ է մնում»։ Պատասխանում է՝ «մի կամ կէս կոպէկ պակաս էք հաշուել»։ Կրկին հաշւում ես, տեսնում, որ իրաւ՝ մի բան պակաս է։ Եթէ մի երկու կոպէկ պարտ մնացիր, տարիներ անցնելուց յետոյ էլ չի մոռանալ, մի օր կըտեսնես դռանդ կանգնած պահանջում է։ Նոյնպէս մոռացկոտ չէ իւր պարտքը վճարելում։ Հարիւրներով փող տուր առանց մի գրաւոր պայմանագրի, տարիներ անցնելուց յետոյ էլի պահանջիր և նա առանց մի խարդախութեան և գեղծմունքների կըյանձնէ քեզ. իսկ եթէ չունի, կըխնդրէ, կաղաչէ սպասել, բայց ուրանալ, երբէք իրեն թոյլ չի տալ, մի բան՝ որ քաղաքակիրթ ազգերի մէջ անգամ հազուադէպ է։ Տոկոսով փող տալ կամ առնել Թուրքմէնների մէջ գոյութիւն չունի, որը մեր հայերիս մէջ հրէշաւոր կերպարանք է ստացել։

Ընտանիքի կամ իւր անձի պատուասիրութիւնը մի յարգելի տեղ չէ բռնում, ինչպէս պարսիկների և միւս մահմեդականների մէջ։

Ինչպէս վերև յիշեցինք, Թուրքմէնները բնակւում են «աուլներում» (վրանաչէն գիւղ)։

Քար ու կրի տունը դրանց մէջ գոյութիւն չունի. յայտնի բան է, կան այնպիսիք, որոնք ապրում են քաղաքներում, որոնք և ունին քարաշէն տներ։ Թուրքմէնները շուտով ընտելանում են քաղաքակրթութեան արտաքին ձևերին. կըտեսնէք Թուրքմէնին իրենց հին երկար հագուստով և միատեղ եւրոպական վերջին ձևի սրածայր կօշիկ ու կըլնկօշիկներով։ Դրանց հիւրասիրութիւնը, ինչպէս և արևելեան միւս ազգերի մէջ, չափազանցութեան է հասած։ Եթէ հիւրն ամբողջ ամիսներով մնայ Թուրքմէնի տանը, Թուրքմէնը ոչ մի դժգոհութիւն չի ցոյց տալ։ Հիւրը տան մէջ այն իրաւունքներն ունի, ինչ որ ընտանիքի միւս անդամները։ Նոյնպէս և ինքը քո տան եղած ժամանակը իրեն՝ քո տան լիազօր տէր է համարում։

Կրօնի ու դաւանութիւնների խտրութիւնները դրանց մէջ գոյութիւն չունին։ Թուրքմէնը քրիստոնեայի հետ այնպէս է վարւում, ինչպէս իւր հաւատակիցների հետ։ Թուրքմէն կրօնապէտները ժողովրդի վրայ այն ազդեցութիւն չունին, ինչպէս որ մեզ հարեան Պարսկաստանում։ Թուրքմէնուհին նոյնպէս չի քաշւում օտարից.—երես ծածկելը, այր մարդուց խորշելը դրանց մէջ սովորութիւն չէ։ Տան մէջ թէ գլխաւոր այր, թէ կին հաւասար իրաւունքի տէր են։ Սովորաբար տղամարդիկ և կանայք միասին են ճաշում, որը պարսիկների մէջ մեծ անպատուութիւն է։

Կանայք առ հասարակ հագնւում են, ինչպէս Ղարաբաղում հայ կանայք, միայն գլուխներն է, որ Ղարաբաղի կնոջ հարիւրաւոր փաթեթներից զերծ է, թէև կապելու ձևը բաւական նման է։

Մի բան, որ լուսաբանութեան կարօտ է, այդ նրանց բարբառի համանմանութիւնն է հայ լեզուի հետ։ Շատ բառեր բոլորովին միևնոյն նշանակութիւնն ունին, ինչ որ հայերի մէջ։ Օր. հայերէն՝ արժան Թուրքմէներէն—արզան, մկրատ—մկրատ, ծհան — ծհան (երկաթէ գործիք, որով հայ գիւղերում թոնրից հաց են հանում), և այլն։ Շատ հաւանական է, որ այդպիսի բառերը հայերից լինին վերցրած։

Պատմութիւնից ինչպէս մեզ յայտնի է, պարսից Յազկերտ թագաւորը Բուչնայ դէմ պատերազմելու ժամանակ հայերին քշում էր դէպի նրանց կողմերը և չէր թողնում յետ դառնալ. գուցէ այն ժամանակից մնացած հայերից են վերցրած այդ բառերը, որոնք դարեր անցնելուց մի փոքր աղաւաղուել են։

Նկարագրելով Թուրքմէնների կեանքից մի քանի գծեր, միւս անգամ կըդառնանք նրանց անտեսական դրութեան։

Սև.

Ասխաբատ։

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԻՇԽԱՆ ԲԻՍՄԱՐԿ.—Չնայելով գերմանական ռայխստագի և Բեռլինի քաղաքային խորհրդի մի մասի ընդդիմութեան, այնուամենայնիւ ամբողջ Գերմանիան և ամենից առաջ ինքը կայսրը պատրաստւում են արժանապէս պատուելու իշխան Բիսմարկին նրա ծննդեան 80-ամեայ տարեդարձի առթիւ։ Բազմաթիւ պատգամաւորութիւններ են գնում Ֆրիդրիխսրուհէ, ուր ապրում է իշխանը. պատգամաւորութիւն է գնում նաև գերմանական զօրաբանակների հրամանատարներից։ Հաւատացնում են, որ մինչև անգամ ինքը կայսրը գնալու է Ֆրիդրիխսրուհէ կայսրուհու հետ միասին և երկաթի նախկին կանցլերին շնորհելու է «Բարձրութեան» (Hoheit) տիտղոսը, այժմեան «Պայծառափայլ» (Durchlaucht) տիտղոսի տեղ (Թերթիս նախորդ համարում սխալ է «Figaro»-ից առած այն տեղեկութիւնը, թէ իշխան Բիսմարկին շնորհուելու է «Պայծառափայլ» տիտղոսը, քանի որ նա իշխան լինելով, արդէն «պայծառափայլ» է)։ «Բարձրութիւն» տիտղոսը, ինչպէս և նախորդ համարումն էինք հաղորդել, չի անցնիլ Բիսմարկի որդիներին, այլ նրանք կըժառանգեն հօր իշխանական տիտղոսը միայն։

—

ՍՊԱՆԵՐԻ ԿՌԻՒԸ ԽՄԲԱԳԻՐՆԵՐԻ ՀԵՏ. — Մադրիդի տեղապահ զօրքի սպաների կողմից տեղւոյն թերթերի խմբագիրների վրայ գործ դրուած բռնութիւնների մասին հետևեալ մանրամասնութիւններն են հաղորդում։

Կուբա կղզու վրայ երեան եկած ապստամբութեան առթիւ «Resume» լրագրի մէջ լոյս տեսաւ մի յօդուած, որի մէջ ասւում էր, թէ այնտեղ ուղարկուած զօրքերն այնքան էլ ցոյց չեն տալիս, թէ իրենք արքայի կողմն են և դժուար թէ հրացան արձակեն ապստամբների վրայ։ Զինուորական շրջաններում այդ յօդուածը մեծ զայրոյթ պատճառեց. Երեկոյեան 30 հոգի սպայ ներս խուժեցին «Resume» լրագրի խմբագրատուն, ջարդուփշուր արին բոլոր կահկարասիները և ծեծեցին աշխատակիցներին։ Հետևեալ առաւօտեան Կաստելարի օրգան՝ «Globo» թերթի մէջ յայտարարուած էր, որ պատգամաւորների ժողովում հարցում է լինելու սպաների այդպիսի վարմունքի մասին, որը լրագիրը դատափետում էր ամենախիստ խօսքերով։ Այդ պատճառով սպաները, այս անգամ 60 հոգի, նոյն աւերածութիւնը կատարեցին «Globo»-ի խմբագրատանը, ինչպէս և «Resume»-ի խմբագրատանն էին կատարել նախորդ երեկոյեան։ Նոյն վիճակին ենթարկուեցաւ նաև «Heraldo» թերթի խմբագրութիւնը։ Անկարգութիւն անող սպաների թիւը հետզհետէ աճում էր և հասաւ մօտ 400-ի։ Զինուորական բերդապահը հրամայեց կալանաւորել շատ սպաների և յայտարարեց, որ նրանք զինուորական դատարանի ձեռք կըյանձնուին։ Մինչդեռ Մադրիդի բոլոր թերթերի խմբագիրները խորհրդակցութեան հաւաքուեցան և վճռեցին դադարեցնել իրենց հրատարակութիւնները, եթէ կառավարութիւնը միջոցներ ձեռք չի առնիլ ապահով դրութեան մէջ դնելու խմբագիրների կեանքն ու գոյքը։ Խմբագիրների կողմից մի պատգամաւորութիւն այդ վճիռը յայտնեց մինիստր-նախագահ Սագաստին, որը սկզբում որոշ պատասխան չտուաւ, բայց յետոյ խոստացաւ հարկաւոր միջոցները ձեռք առնել։ Ցիրաւի, արդէն նոյն օրն երեկոյեան խմբագրատների մօտ ոստիկանական պահնորդներ էին կանգնեցրած։ Այդ կարգադրութիւնը զինուորականների մէջ մեծ դժգոհութիւն յարոյց։ Մօտ հազար հոգի սպայ, դրանց թւում մինչև անգամ հրամանատար գեներալներ հաւաքուեցան զինուորական ժողովարանում։ Վճռուեցաւ մենամարտութեան հրաւիրել խմբագիրներին, զօրքի պատիւը շօշափող յօդուածների հեղինակներին, և պահանջել, որ անմիջապէս արգելուին լրագիրների այդպիսի յօդուածները։ Այն ժամանակ մինիստրութիւնն իւր ամբողջ կազմութեամբ հրաժարական տուեց, իսկ Մադրիդի կապիտան-գեներալ նշանակուած մարշալ Մարտինեց-Կամպոսը վերականգնեց կարգը, բայց միևնոյն ժամանակ լրագիրներին յայտարարեց, որ այսուհետև այն խմբագիրները, որոնք դարձեալ կըհամարձակուեն վիրաւորել զօրքի պատիւը, կըդատուեն պատերազմի ժամանակի օրէնքով։

—

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

«Nordd. Allg. Zeit.»-ը հաստատում է այն լուրը, թէ մարտի 14-ին (26-ին) Վիլհելմ կայսրը կըգնայ Ֆրիդրիխսրուհէ իշխան Բիսմարկին այցելելու համար։

—

Քաղաքական շրջաններում շատ են խօսում գրաֆ Ռօզբերիի հիւանդութեան մասին. նա տանջւում է անքնութիւնից և ջղային խանգարումից, որի պատճառով ստիպուած է լուրջ գործերով չզբաղուել։ Ասում են, որ նա կամ երկար ժամանակով արձակուրդ կըխնդրի, կամ հրաժարական կըտայ պաշտօնից։ Ինֆլուէնցան կործանիչ ազդեցութիւն է ունեցել նաև ուրիշ մի քանի մինիստրների և ազատամիտ կուսակցութեան պարագլուխների առողջութեան վրայ։

—

Վերոյիշեալ պատճառով անգլիական ազատամիտ կուսակցութիւնը յոյս ունի, որ Գլադստոնը վերադառնայ Լոնդոն։ «Մեծ ծերունին» առողջացել է Ռիվիերում և պատրաստւում է ոչ թէ միայն վերադառնալ Անգլիա, այլ և իւր տեղը բռնել պարլամենտում, այն նպատակով, որպէս զի գործունեայ մասնակցութիւն ունենայ քաղաքական գործերի քննութեանը։ Ազատամիտ կուսակցութիւնը մտադիր է դիմել Գլադստոնին, խնդրելով, որ նա վերստին մտնէ մինիստրութեան մէջ։

—

Անգլիական համայնքների ժողովում, Կիպրոս կղզու կառավարութեան համար յատկացուող տարեկան ծախքերը քննելիս, Հարկորտը յայտարարեց, որ Անգլիայի կառավարութիւնը չի կարող իւր երկիրը ծանրաբեռնել փոխառութիւն անելով Կիպրոս կղզին գնելու համար։ Այդ կղզին Թիւրքիային վերադարձնելու մասին խօսք էլ չի եղել. առհասարակ ափսոս է, որև է բան յանձնել Թուրքերին։

—

Մարտի 6-ին (18-ին) Հռոմի պապը մի ճառ է խօսել, որ մարտի 8-ին պիտի լոյս տեսնէր։ Այդ ճառը սկսւում է նրանով, որ պապը դատապարտում է ունգարական օրէնքը քաղաքական ամուսնութեան և ապահարզանի մասին։ Պապը ընդունում է, որ պետութիւնն իրաւունք ունի որոշելու ամուսնական գործերը քաղաքացիական կեանքում, բայց յայտարարում է, որ եկեղեցուն է պատկանում ամուսնական կապերին վերաբերեալ վճիռները, որովհետև Քրիստոսը եկեղեցուն իրաւունք է շնորհել ամուսնութիւնը խորհուրդ հրատարակելու։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Դիւանագէտների կարծիքները ընդհանուր խաղաղութեան մասին.—Անգլիական մի ամսագիր առաջ է բերում Անգլիայում գտնուող դիւանագիտութեան ներկայացուցիչների պատասխանները որ նրանք տուել են իրենց առաջարկած այն հարցին՝ թէ «ինչ է նշանակում ընդհանուր խաղաղութիւնը»։ Միացեալ Նահանգների դեսպան Բայեարտ երկարօրէն բացատրելով այն հիմունքները, որոնք կարող են հաստատել բարեկամական յարաբերութիւնները իւր պետութեան և Անգլիայի միջև, այն եզրակացութեան է գալիս, որ «առևտրական յարաբերութիւնները պէտք է իբրև հիմք ծառայեն ընդհանուր խաղաղութեան համար»։ Գրաֆ Տօրնիէլլին յայտնել է, որ «խաղաղութիւնը» դիւանագիտութեան միակ հիմքն է ներկայացնում»։ Սպանիայի դեսպանը՝ Դել-Մազօ հաստատում է, որ «խաղաղութիւնը ծնում է ազգային առաջադիմութիւն և հայրենիքի բարօրութիւն»։ Ընդհակառակն՝ Բրազիլիայի դեսպանը հաստատօրէն յայտարարում է, որ «խաղաղութիւնը մի «միֆ»-է, «երազ»-է, մինչդեռ Հոլանդիայի դեսպանն ընդունելով, որ «քանի կան մարդիկ խաղաղութիւնը միշտ «միֆ» կըմնայ, այնուամենայնիւ հաւատում է միջազգային միջնորդական դատարանի հնարաւորութեանը»։ Բելգիայի դեսպանը նկատում է. «խաղաղութիւնը ամենամեծ բարիքն է աշխարհումս. իւրաքանչիւրը համաձայն է այս բանին խօսքով, իսկ գործով ոչ»։ Սերբիայի լիազօր դեսպանը ցանկութիւն է յայտնում որ սէրը ամեն զգացմունքներից նախապատիւ համարեն «մարդկութեան և ազգերի առաջադիմութեան» համար։ Հայիտի ներկայացուցիչը բացականչում է. «խաղաղութիւնը միակ էական պայմանն է ժողովրդի և մարդկային ցեղերի քաղաքակրթութեան համար»։ Չինաստանի դիւանագէտը յայտնել է. «խաղաղութիւնը—ազգերի շահերն է ներկայացնում»։

—

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«ՆՈՐ-ԴԱՐ»-ԻՆ
ՌՈՒՍԱԿԱՆ ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՀՌՈՎՄ, 13 մարտի («Ռիֆորմա»).—Մասաուայից «Ստեֆանիի» հեռագրական գործակալութեան հաղորդում են. «Գեներալ Բարատիէրի իւր զօրքերով մտաւ Սենաֆէ. սրա նպատակն է կտրել հաբեշստանցիների շարժումները, որոնք առաջացել են այն հանգամանքից, որ Ռասմանգաշին մերժել էր զինաթափ լինել և խաղաղ թողնել Ագամէն»։

ԼՈՆԴՈՆ, («Ռէյտեր»).—Չինաստանից հաղորդում են. «Ձիւնի մրրիկների պատճառով պատերազմական գործողութիւնները հիւսիսային Չինաստանում դժուարացած են։ Տամսուի քաղաքի պաշարման լուրը ստոյգ չէ. միայն նաւահանգիստն է փակուել. նաւերը ափին մօտ են բեռնաւորւում։ Ճապոնական մարտանաւերը տիրեցին Տաօգօս կղզուն, որ Պեսկադորեան կղզիներից նշանաւորն է»։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, մարտի 14.—Թագաւոր Կայսրը 1894 թուին բարեհաճել էր հիմք դնել Խաբարովսկում մի հասարակաց գրադարանի, նուիրելով իւր սեպհական մատենադարանից 636 հատոր գիրք։ Այս բարի օրինակին հետևեցին շատ անձեր, հիմնարկութիւններ և ընկերութիւններ, որոնց նուիրած գրքերի թիւը 4,645 հատորի է հասնում։ Բացի սրանից, զանազան տեղերից նուիրել են միևնոյն գրադարանին 6,551 գիրք։ Այս առթիւ Նորին Մեծութեան ամենահպատակօրէն մատուցած զեկուցագրի վրայ, Թագաւոր Կայսրը բարեհաճել է իւր սեպհական ձեռքով մակագրել հետևեալը. «Ուրախ եմ այս [illegible] [illegible], որոնք նշանակուած են [illegible] [illegible] համար»։ Բացի սրանից Թագաւոր Կայսրը բարեհաճեց ուղարկել գրքերի մի մի օրինակ էլ Բլագովեշչենսկ, այնտեղի ոչ հարուստ հասարակաց գրադարանը լրացնելու նպատակով։ Եթէ շարունակուեն նուիրատուութիւնները գրքերով, մտադրութիւն կայ կամ հիմնելու նոյն տեսակ գրադարաններ Սիբիրի աւելի նշանաւոր քաղաքներում, կամ ճոխացնելու եղած գրադարանները։

Նորին Կայսերական Մեծութիւնների պսակադրութեան յիշատակին Սիմֆերոպոլի քաղաքային խորհուրդը վճռեց հիմնադրել օրինակելի տարրական ուսումնարան։

Նոյն Կայսերական Մեծութիւնների պսակադրութեան յիշատակին Տվեր նահանգի Կիմրի գիւղի բնակիչները հիմնում են ձրի գիւղական գրադարան և խաչվառակիրների ընկերութիւն։

Ճապոնիայում գտնւում են աւելի քան 21,000 ուղղափառ քրիստոնեաներ։ Չին-ճապոնական պատերազմում քրիստոնեաները քաջութեամբ են մարտնչում։

Առաջին ճապոնացի զինուորը, որ ոտք կոխեց Չինաստանի հողը, ուղղափառ էր։ Թշնամու դիմացը նա ջրի անցք գտնելով, անցաւ Յալու գետը. բայց դէպի յետ դառնալիս, գնդակահար ընկաւ թշնամուց։ Իշխանութիւնը մի հոյակապ արձանագրութիւն կազմել տուեց նրա յիշատակին։

ԽԱՐԿՈՎ.—Հոկտեմբերի 17-ի անցքի յիշատակին այստեղ հիմնւում է մի հիւանդանոց 56,000 ր. գումարով, որ նուիրել է կրակից ապահովող ընկերութիւնը։ 1896 թուականից հիւանդանոցը քաղաքի հաշուով կըպահուի։

ԿՈՊԵՆՀԱԳԷՆ, («Ռիֆորմա»). — Կումբերլենդեան հերցոգը և հերցոգուհին կըժամանեն այստեղ մարտի 15-ին։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—Սարատովի նահանգապետը իւր 1893 թ. ամենահպատակօրէն մատուցած հաշուետուութեան մէջ առանձին ուշադրութեան առնելով ժովրդական կրթութեան հարցը, նկատում է, որ դպրոցը, անշուշտ, առաջադիմում է, որ աշակերտների թիւը տարէցտարի աւելանում է և յուսալի է, որ սերունդը աստիճանաբար զարգանալով դպրոցներում, տակաւ առ տակաւ կաշխատէ պատճառաւոր հայեացք ընտանալու գիւղական կեանքի պայմանների վրայ և կարողանայ հասկանալ այն բոլոր միջոցների օգտակարութիւնը, որոնք գործ են դրւում ժողովրդական կենցաղավարութիւնը բարւոքելու համար։ Այս բացատրութեան վրայ Նորին Մեծութիւնը բարեհաճեց մակագրել հետեւեալը «Պէտք է յուսալ»։ Իսկ Տուլայի նահանգապետի այն յայտարարութեան վրայ, թէ ներկայումս դպրոցներում ուսում են առնում գլխաւորապէս տղաները որոնք բոլոր սաների 4/5 մասն են կազմում և թէ ցանկալի է որ աւելի մեծ թւով աղջիկներն էլ կրթութիւն ստանան, վասն զի կին-մայրերի գրագիտութիւնը ժողովրդական կրթութեան հիմնաքարն է, Նորին Մեծութիւնը բարեհաճեց հետեւեալ դիտողութիւնը մակագրել «Բոլորովին համաձայն եմ սրան։ Այս չափազանց կարեւոր հարց է»։

Պետերբուրգ ժամանեց Դ. Ցանկով։

Լրագիրները հաղորդում են, որ ռուս տեխնիքական ընկերութեան կից մի յանձնաժողով է կազմուել, որ կը զբաղուի թէ ինչպէս պէտք է կանոնաւորել զանազան գործարաններում աշխատողների բանուորական ժամանակը։

Երկրագործութեան մինիստրութիւնը գիւղերում ցրւեց ժողովրդին հասկանալի լեզուով գրած խրատական գրքոյկներ՝ թէ ինչպէս պէտք է ոչնչացնել մորեխը, ճպուռն և ուրիշ տեսակ վնասակար միջատները։

ԼՈՆԴՈՆ, (Ռէյտէր),—Եոկոհամայից հեռագրում են «գնդակը նստել է Լի-Հունգ Չանգի ձախ աչքից վար 3 սանտիմետր խորութեամբ։ Լի-Հունգ-Չանգը չի ուզում հանել տալ գնդակը։ Կայսրը ուղարկեց 2 բժիշկ, կայսրուհին երկու հակող կին»։

Քորէան մերժեց ճապոնացիների առաջարկը նրա համար փոխառութիւն անելու մասին։

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱՆ

Մարտի 14-ից.

—

Վեքսէլի կուրս 3 ամսով։

Լոնդոնի վրայ 10 ֆ ստ.	93,05
Բեռլինի վրայ 100 մարկ	45,42½
Պարիզի վրայ 100 ֆր.	36,80
Վեքսէլի կուրսի տրամադր. խաղաղ է.	
Նոր կտրած պոլուիմպերեալներ	7,40 — 7,43 վաճ.
Մաքսային կուպ. (100 ր. մետալով)	147½ — 148
Բորսային զեղչը	5-ից 7%
4% Պետակ. արժեթղթ	99⅞
5% ռսկ. արժեթ. 1884 թ.	164
5% Առաջ. Ներքին փոխ. խաղատոմս 1864 թ.	239
5% Երկր. Ներք. փոխառ. խաղատոմս 1866 թ.	225½
Ազնուակ. հող. բանկի գրաւակ. խաղատոմս	214
5% Պետակ. երկաթուղ. արժեթուղթ	101⅜
4% Ներքին փոխ. I սեր.	99½
„ „ „ II „	99½
„ „ „ III „	99⅜
„ „ „ IV „	99½
4½% փոխ. 1893 թուի	101⅝
„ փոխ. 1 հրատակ.	101⅝
„ փոխ. 2 հրատարակ.	101⅝
4½% Գրաւակ. արժեթղ. ազն. հողային բանկի	101⅞
4½% Գիւղական հողային բանկի վկայաթղթեր	101⅞
5% Ս. Պետ. քաղ. վ. ընկ.	102
„ „ Մոսկուայի	101½
5½% Օդեսսայի	100⅜
5% Թիֆլիսի	99¼ գն.
5½ Գիւղակ. արժթ. հող. բանկերի Խարկովի	100¼
„ Պոլտաւայի	100¼
„ Տուլայի	100½
„ Կիեւի	101¼
„ Մոսկուայի	100¼
„ Բեսսարաբիայի	100¼
„ Նիժնի-Սամարայի	100¼
„ Դոնսկոյ	100
„ Վիլենսկի	100¼
6% Թիֆլիսի կալ. բանկի	101¾ գն.
5% „ „ „	99½ վաճ.
6% Քութայիսի կալ. բանկ.	101 գն.
5% „ „ „	99½ „

Խմբագիր հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

Շնորհակալութեամբ ստացանք Թիֆլիսի պատուաւոր քաղաքացի պ. Ս. Բաբանասեանից նուէր ս. Լուսաւորիչ եկեղեցու սեղանի համար երկու լու-ջահ և մէկ հատ ոսկեզօծ [illegible] սկիհ։ Ցանկալի է, որ ուրիշներն էլ հետեւէին այդ բարի օրինակին։

Ս. Լուսաւորիչ եկեղեցու քահանայ՝

Մկրտիչ Գուլամիրեան.

1—1

«Մեր Գեառ-Գեառ գիւղի ազքատիկ ուսումնարանը չունենալով ընթերցանութեան համար հայերէն գրքեր՝ խոնարհաբար խնդրում եմ մեծապատիւ հեղինակներից, թարգմանիչներից և հրատարակիչներից, որ բարեհաճեն նուիրել իրենց աշխատութիւններից մի-մի օրինակ։

Հասցէ՝ Гергерское Армянское церк— прих. училище.

Ուսուցիչ Յ. Աւետիսեան



Ընդրկովկ. երկաթուղի

—

Մարդատար գնացքը Թիֆլիսից Բաթում դուրս է գնում առաւօտեան ժ. 9-ին 30 ր. և Բաթում հասնում է երեկոյեան ժ. 9-ին 45 ր.։

Փոստային գնացքը Թիֆլիսից Բագու դուրս է գնում ցերեկուայ ժ. 1-ին 10 ր. և հասնում է Բագու առաւօտեան 7. ժ. 30 ր.։

Փոստային գնացքը Թիֆլիսից Բաթում դուրս է գնում երեկոյեան ժ. 6-ին 50 ր. և Բաթում հասնում է առաւօտեան ժ. 8-ին 15 ր.։

Մարդատար գնացք Բաթումից Թիֆլիս դուրս է գալիս առաւօտեան ժ. 9-ին 40 ր. և Թիֆլիս հասնում է երեկոյեան ժ. 9-ին 55 ր.։

Փոստային գնացքը Բաթումից Թիֆլիս դուրս է գնում գիշերուայ ժ. 11-ին 20 ր. Թիֆլիս է հասնում ցերեկուայ ժ. 12-ին 25 ր.։

Փոստային գնացքը Բագուից Թիֆլիս դուրս է գալիս գիշերուայ ժ. 11-ին 5 ր. և Թիֆլիս հասնում ցերեկուայ ժ. 5-ին 50 ր.։

Ապրանքա-մարդատար գնացքը Թիֆլիս-Գանձակ դուրս է գնում երեկոյեան 7 ժ. 27 ր., հասնում է Գանձակ առաւօտեան 7 ժ. 40 րոպէին։

Ապրանքա-մարդատար գնացքը Գանձակից Թիֆլիս դուրս է գալիս երեկոյեան 6 ժամին, հասնում է Թիֆլիս առաւօտուա 7 ժ. 35 րոպէին։

Պոստ. երթ. Ռազմա-վրական ճանապարհով

—

Թիֆլիսից հինգ հոգու տեղ ունեցող կառքը ուղեւորւում է առաւօտեան 8 ժամին, գիշերում է Մլէթի կայարանում, Վլադիկավկազ է հասնում հետեւեալ օրը ժամը 7-ից մինչև 8-ը երեկոյեան։

Վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը (օմնիբուս) ուղեւորւում է կէսօրից յետոյ ժամը 3-ին և առանց գիշերելու տեղ է հասնում Վլադիկավկազ հետեւեալ օրը ժամը 7-ից մինչև 8-ը երեկոյեան։

Վլադիկավկազից՝ հինգ հոգու տեղ ունեցող կառքը ուղեւորւում է առաւօտայ ժամը 8-ին, գիշերում է Մլէթի կայարանում, Թիֆլիս է հասնում հետեւեալ օրը ժամը 7-ից մինչև 8 ժամը երեկոյեան։

Վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը (օմնիբուս) ուղեւորւում է կէսօրից յետոյ ժամը 3-ին և առանց գիշերելու հասնում է Թիֆլիս հետեւեալ օրը ժամի 7-ից մինչև 8 ժամը երեկոյեան։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀՐԱՒԷՐ

Հոգևոր իշխանութեան կարգադրութեամբ առաջիկայ կիւրակէ, մարտի 19-ին, առաւօտեան ժամը 12-ին, ս. պատարագից յետոյ պիտի կատարուի ԹԱՆԳՈՅԵԱՆ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՈՐ ԵՐԵՑՓՈԽԱՆԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ, ուստի հրաւիրում եմ նոյն եկեղեցու ծխական ժողովրդներին շնորհ բերել եկեղեցի մասնակցելու ընտրութեանը։

Թիֆլիսի ք. մ. եկեղեցիների գործակալ՝

Աշոտ քահ. Թեմուրազեանց։

(631) 1—1

Լոյս տեսան

ՍԱՐԿ. Յ. ՃՈՒՂՈՒՐԵԱՆ

«ՄՈՌԱՑՈՒԱԾ ԱՇԽԱՐՀ»-ի

Ա. և Բ. գրքերը։ Վաճառւում են Կենդր. և Կովկաս. գրավաճառանոցներում, Մ. Զմկեանի և ինձ մօտ։ Ա. գիրքը՝ արժէ 60 կոպ. Բ. 50 կոպ. միասին 1 րուբլի։ Միմիայն Ա-ից գնողներին հարիւրին զիջւում է .... 30%, երկրորդին 20%

Հասցէս՝ Тифлисъ, Николаевская ул., д. Алелова № 10.

Սարկ. Յ. ՃՈՒՂՈՒՐԵԱՆ

15—6



Спеціальность
ЦВѢТОЧНО-ГЛИЦЕРИН. МЫЛО РАЛЛЕ
кус. 20 коп.
ЦВѢТОЧНАЯ ВОДА РАЛЛЕ
1 РУБ.

(М.) 10—2

!ԶԳՈՒՇԱՑԷՔ ԿԵՂԾԻՔՆԵՐԻՑ!

Առողջապահական

ՈՍԿԵՓՈՐԱԿԻ-ՏՈՒԹԻՆԻ ՕՃԱՌ

Դեղագործ

Գ. Ֆ. ԻՒՐԳԵՆՍԻ

ոչնչացնում է ճանճերը, արեւից այրուածքը, դեղին բծերը, եղանդները բշտիկները և պաշտպանում է [illegible] դէմ։ Առաջարկում է որպէս արգասաւորի անուշահոտ բարձր որակութեան օճառ։

Մեկտորի գինը՝ 50 կ., ½ կտորինը՝ 30 կ.։ Վաճառւում է բոլոր ամենալաւ դեղատներում և դեղատնային խանութներում։

ԳԼԽԱՒՈՐ ՊԱՀԵՍՏԸ բոլոր Ռուսիայի համար Գ Ֆ. ԻՒՐԳԵՆՍԻ մօտ, Մոսկուայում։ ԴԵՊՈՆ ԹԻՖԼԻՍՈՒՄ՝ դեղատնային ապրանքների առեւտր. ընկերութեան Տուրինովի, պ. պ. Գոպպի, Ազմայովի դեղատներում։

(М.) 24—21

«ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԵԱՆ ՄԵՂՔԵՐ»

խրատական գրուած օնանականութեամբ իրենց ջղային կազմուածքը խանգարածների համար։

Հեղ. Դ-ր Լօրէնցի

ռուսերէն հրատարակութիւնը՝ Դ-ր Բ-լի։ Գինն է 1 րուբ.

Այս օգտաւէտ գիրքը պարունակում է իւր մէջ շատ խրատներ, թէ ինչպէս կարող են ազատուել հիւանդները վերոյիշեալ ախտի վնասակար հետեւանքներից և վերականգնել խանգարուած ոյժերն ու առողջութիւնը։ Այս գիրքը թոյլատրուած է Մոսկուայի գրաքննական կոմիտէից։

Հրատարակութեան պահեստն է Օտտո Ասպերգէրի մօտ, Լայպցիգում (Otto Asperger, Leipzig) (Սակսոնիա)։ Օտարաքաղաքայինները ճանապարհածախս չեն վճարում։

(М.) 36—26

Յ. ԹԱՇԻՐԵԱՆԻ և Կ. ԱԼԻԽԱՆԵԱՆԻ

ՁԻԹԱՀԱՆ և ՍԱՊՆԻ ԳՈՐԾԱՐԱՆ

այս մեծ պասի համար առաջարկում է քունջութի, վուշի, կանե ձէթ կերակուրի մէջ գործածելու, նմանապէս կաստորեան, կանթ և ներկելու համար եփած ձէթ, այլ և բարձր տեսակի սապոնն

Ձէթերը շիշերով վաճառւում են դեղատնային ապրանքն Կովկասեան ընկերութեան վաճառատանը. Զովաննիի մօտ Գոլովին պրոսպեկտ. տ. Պոբրժանսկու և Վորոնցովի արձանի մօտ Դարչա կարովի մօտ, Նիկոլաեւսկայա փ., Ալեքսանդրովսկայա եկեղեցու գի Զալմալեանցի մօտ Պանասչեւիչ փ., տ. № 1.

Մաս մաս վաճառւում են սեպհական խանութներում—Ս յէլեան փ. տ. Կարալեանի, Վորոնցովի արձանի մօտ. Սոլդատսկի զարում տ. Բուղդանեանի, Թուրքաց մէյդանում քաղաքային խան Հալաբեարի հրապարակում քաղաքային խանութ և Օլգինեան փ ցում տ. Մեբուրնութովի։

Մեծ քանակութեամբ վաճառւում են գործարանում Երիվ կոյէ շոսսէի վրայ, սեպհական շէնութեան մէջ։

(684) 12—7

BATEAUX a VAPEUR FRANÇAIS N. PAQUET ET C

ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

„Ն. ՊԱՔԷ եւ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղիղ երթեւեկութիւն ՄԱՐՍԷՅԼԻՑ ԲԱԹՈՒՄ և ԲԱԹՈՒ ՄԱՐՍԷՅԼ երկու շաբաթը մի անգամ։

Բաթումից Մարսէյլ գնալիս մտնում է Տրապիզոն, Սամսոն և Պոլիս քաղաքն

Բաթումից Պարիզ հաղորդակցութեան տոմսակները սովորական գինուն ու Որովհետեւ հաստատուած կարանտիններին պատճառով անկարելի է վաղ ճշտութեամբ որոշել շոգենաւերի Բաթումից դուրս գնալու օրերը, այդ պատ ճառ, այդ տեսակ և այլ տեղեկութիւնների մասին թող բարեհաճեն դիմել հե տեւեալ գործակալներին.

Բաթումում—պ. ՎԻԿՏՈՐ ԴԱՐՆՈՅԻՆ, Նաբերեժնայա։
Թիֆլիսում պ. ԲԱՐԵԿԵՆԴԱՆԵԱՆԻՆ, Սիոնի փողոց, քարվանս. Դէսլ
Բագւում—պ. Սամուէլ Դիլդարեանին, Կոլիւբակինսկայա հրապարակ։
Նովորոսիյսկում—պ. ԼՈՒԻ ՌԵՆՈՅԻՆ։

(316) 20—11

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏՈՒՆ

ԵՂԲ. ԽԱՐՄԱՋԵԱՆԻ

ՅԱՋՈՐԴՆԵՐ Ե. Մ. ԿՐԱՍԻԼՆԻԿԵԱՆԻ

ՄՈՍԿՈՒԱՅՈՒՄ

Черкасскій переулокъ, домъ Князя Голицына, во дворѣ.

Թաշկինակների, գուլպաների, անկողնածների, աւեղների, գալանտերէյ եւ ռուսական ապրանքների

ՎԱՃԱՌՈՒՄՆ

(683) 15—6.

L'URBAINE
УРБЭНЪ
Общество Страхованія Жизни.

Невскій пр., № 13.

Ապահովագրուած անձերը, իրենց ապահովագրութեան հե ռաջին տարուց, մասնակցում են Ընկերութեան տարեկան հաշ բից յատնուող օգուտների 50%-ին։

Նրանց, այդպիսի մասնակցութեան փոխարէն, նոյնպէս բա կան նշանաւոր արտօնութիւններ են տրւում հիւ ւանդ լինելու կամ աշխատանքի կատարելապէս անընդուն ւանալու դէպքում։

(331) 40—9.

Марта 1895 г. Տպարան Ա. Մելիք-Շահնազարեանցի։ Типогр. О. А. Меликъ-Шахназаріанца Воронц. Набережн. Церковный